Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ֆիզկուլտ հրահանգչի (0,5 դրույքաչափ) և կրտսեր 1-ին խմբի դաստիարակի (1,25 դրույքաչափ) թափուր պաշտոնի համար:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆավորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձեւ 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 11:00-ին:

Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, քաղաք Մասիս, Ազատամարտիկների 27:

Հեռ.՝ 093-90-48-72 Արմինե Թեւոսեքեջյան

Էլ.փոստի հասցե՝ e-mail- tiv3.msurmankapartez@mail.ru